Հավելված
Հաստատվել է ՀՀ ՀՊ
2022թ. մարտի 30-ի թիվ 84-Ա որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԵՐԵԼԱԿՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2022

Բովանդակություն

Ներածական մաս 3-4 էջեր

Ամփոփագիր 4-7 էջեր

Անկախ հաշվեքննության կարծիք 7-9 էջեր

Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ 10-26 էջեր

Արձանագրված այլ փաստեր 26-32 էջեր

Առաջարկություններ 32 էջ

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի գործունեության ծրագրի 2-րդ մասի 6-րդ կետ, 2021 թվականի մայիսի 11-ի թիվ 146-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	Երևանի քաղաքապետարան:
Հաշվեքննության առարկան	Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացվող վերելակների հիմնանորոգում:
Հաշվեքննության առարկայի չափանիշները	«Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշում, գնման պայմանագիր:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը:
Հաշվեքննության կատարման ժամկետը	Նախատեսված էր 2021 թվականի մայիսի 31-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը: Հաշվեքննության կատարման ժամկետը երկարաձգվել է մինչև 2022 թվականի մարտի 31-ը ներառյալ:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննությունների մեթոդաբանությունների, «ՀՀ հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացության նախագծի և դրան կից ներկայացվող փաստաթղթերի ուղեցույցի» համաձայն: Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ ընթացակարգերը:

Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի իններորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգել է Հաշվեքննիչ պալատի անդամ Դավիթ Չիբուխչյանը մինչև 2021 թվականի նոյեմբերի 19-ը, դրանից հետո՝ Հաշվեքննիչ պալատի անդամ Աբրամ Բախչագուլյանը:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Երևան քաղաքի բյուջեում կատարված փոփոխության հիման վրա գնումների պլանում 2020 թվականի ապրիլի 1-ին 500 վերելակների ձեռքբերման համար լրացվել են 6 չափաբաժիններ: Վերելակների հիմնանորոգում» ծրագրին 2020 թվականին լրացուցիչ հատկացված 5,000,000.0 հազ. դրամի դիմաց գնումների պլանում լրացումների նախահաշվային գների հանրագումարը կազմել է 4,878,572.9 հազ. դրամ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը»: Փոխարինման ենթակա վերելակները խմբավորվել են չափաբաժիններով ըստ վարչական շրջանների: Հասցեների ընտրությունը կատարվել է վարչական շրջանների կողմից ներկայացված փոխարինման առաջնահերթությունների հիման վրա: Վերելակների փոխարինման առաջնահերությունների ընտրանքը վարչական շրջանների կողմից կատարվել է առանց համապատասխան չափորոշիչներ սահմանելու:

Մինչև մրցույթի հրավերի հայտարարության վերջնաժամկետի ավարտը Երևանի քաղաքապետարանին հնարավոր մասնակիցների կողմից ներկայացվել են բազմաթիվ հարցումներ հրապարակված հայտարարության հրավերի տեքստի վերաբերյալ: Մասնավորապես.

- Հրավերում նշված չէ հորանի խորությունը և որոշ տեղերում սխալ է նշված վերին հարկի բարձրությունը:

- Արդյոք հրավերում նշված տեխնիկական տվյալները չպետք է կազմվեին հիմք ընդունելով նախագծային արդյունքները, այլ ոչ թե հակառակը:
- Նախագծի բացակայության պարագայում որտեղից են վերցվել վերելակների տեխնիկական տվյալները և ինչ հիմքերով, քանի որ 1300մմ կամ 1400մմ հորանների դեպքում 800մմ դռների բացվածքը չի կարող համարվել ստանդարտ:

Ներկայացված հարցերին գնահատող հանձնաժողովը պատասխանել է, որ տեխնիկական բնութագրի չափորոշիչները տրամադրել են վարչական շրջանները որպես կողմնորոշիչ տվյալներ: Նշվել է նաև, որ հաշվի առնելով շենքերի կառուցվածքի տարբերությունները և դրանցով պայմանավորված նաև վերելակների ու հորանների տեխնիկական բնութագրերի և չափերի բազմազանությունը, հնարավոր տարակերպ ընկալումից խուսափելու նպատակով անհրաժեշտ է, որպեսզի մասնակիցը մինչև հայտ ներկայացնելը կամ դրանից հետո իր կողմից տեղում իրականացնի տեխնիկական պարամետրերի ցանկացած չափագրում իր մասնագետների կողմից:

Հնարավոր մասնակիցներից մեկը նշել է, որ հաշվի առնելով տեղական նորմերը՝ վերելակների վերջին հարկի բարձրությունը չի կարող լինել 1000մմ կամ 1500մմ, կամ դրանց մոտ չափեր, և խնդրել է 6-րդ չափաբաժնի Արաբկիր վարչական շրջանի հորանների վերջին հարկերի բարձրությունների վերաբերյալ տրամադրել ճիշտ տեղեկատվություն: Գնահատող հանձնաժողովի կողմից տրվել է նույն պատասխանը՝ տարակերպ ընկալումից խուսափելու նպատակով անհրաժեշտ է, որպեսզի մասնակիցը մինչև հայտ ներկայացնելը կամ դրանից հետո իր կողմից տեղում իրականացնի տեխնիկական պարամետրերի ցանկացած չափագրում իր մասնագետների կողմից:

Հնարավոր մասնակիցը հարցրել է նաև, թե ինչ հիմքերով և գնահատականների հիման վրա է ընտրվել պայմանագրի (համաձայնագրի) ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020 թվականի հոկտեմբերի 31-ը ներառյալ վերջնաժամկետը, քանի որ ՀՀ տարածքում երբևէ նման ծավալի վերելակների

փոխարինման աշխատանքներ չեն կատարվել և, հաշվի առնելով միջազգային փորձը, նման քանակի վերելակների համար տրամադրվում է ավելի երկար ժամանակահատված, քանի որ միջին հաշվարկներով միայն վերելակների արտադրությունը և մատակարարումը ՀՀ տարածք կտևի 80 օր: Գնահատող հանձնաժողովի կողմից տրվել է պատասխան, որ պայմանագիրը կարող է երկարացվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի համապատասխան:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

Փաստորեն, գնման հնարավոր մասնակիցների հարցումները ցույց են տալիս, որ գնման առարկայի տեխնիկական բնութագրի սխալներով և թերի կազմումը հանգեցնում է գնումների գործընթացում մրցակցության և հնարավոր մասնակիցների ներգրավման համար խոչընդոտների առաջացմանը:

2020 թվականի հունիսի 16-ին Երևանի քաղաքապետարանը վերելակների ձեռքբերման նպատակով «ՌԱՖԵԼԳՐԻԳ» ՓԲԸ հետ կնքել է ապրանքի մատակարարման պայմանագիր: Պայմանագրի գինը կազմել է 4,678,830.0 հազ. դրամ՝ ներառյալ ԱԱՀ: Պայմանագրով 500 վերելակների տեղադրման վերջնաժամկետ է սահմանվել մինչև 2020 թվականի հոկտեմբերի 31-ը՝ պայմանագրի հավելվածում նշված համապատասխան հասցեներում: Պայմանագիրը կնքվել է 6 չափաբաժինների համար: Գնման առարկայի միավորի գինը չափաբաժիններում սահմանվել է միջին գնով՝ չափաբաժնի ընդհանուր գումարը հարաբերած վերելակների թվին, առանց հաշվի առնելու, որ առկա են տարբեր բնութագրեր և գներ ունեցող վերելակներ:

2020 թվականի հոկտեմբերի 30-ին Երևանի քաղաքապետարանի և «ՌԱՖԵԼԳՐԻԳ» ՓԲԸ միջև կնքվել է թիվ 3 համաձայնագիրը, որով պայմանագրով նախատեսված վերջնաժամկետը՝ հոկտեմբերի 31-ի փոխարեն սահմանվել է

դեկտեմբերի 20-ը, որը թույլատրվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 24-ի «Գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու թույլտվություն տալու մասին» թիվ 1567-Ա որոշմամբ:

Համաձայն կնքված պայմանագրի, կատարողը՝ «ՌԱՖԵԼԳՐԻԳ» ՓԲԸ պարտավորվել է փոխարինված վերելակների տեղադրումից հետո 12 ամիս իրականացնել տեխնիկական սպասարկում: Ընտրանքային կարգով ուսումնասիրվել են Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի «Արգիշտի» համատիրության բազմաբնակարան շենքերում փոխարինված 16 վերելակների անձնագրերը: Պարզվել է, որ բոլոր անձնագրերում տեխնիկական սպասարկման աշխատանքների գրանցման համար նախատեսված էջերում համապատասխան գրառումները բացակայում են: Փաստորեն, չի հիմնավորվում «ՌԱՖԵԼԳՐԻԳ» ՓԲԸ կողմից փոխարինված վերելակների տեղադրումից հետո 12 ամիս տեխնիկական սպասարկման կատարումը, որի արժեքը ներառված է պայմանագրի գնի մեջ և վճարվել էր նախորոք՝ վերելակների հանձնման ընդունման արձանագրությունների հիման վրա: Սակայն, պայմանագրում տեխնիկական սպասարկման աշխատանքների առանձնացված գնահաշվարկի բացակայության պատճառով հնարավոր չէ որոշել այդ գումարի չափը:

ԱՆԿԱԽ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

ՀՀ հաշվեքննիչ պալատի 9-րդ վարչությունը, հիմք ընդունելով «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի և 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթները, ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն է իրականացրել Երևանի քաղաքապետարանի կողմից 2020 թվականի վերելակների հիմնանորոգման նկատմամբ:

Ղեկավարության պատասխանատվությունը

Երևանի քաղաքապետարանի ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար՝ բյուջետային դասակարգումների և դրանց կիրառման ցուցումների

համաձայն, ինչպես նաև ֆինանսատնտեսական գործունեությունը իրավական ակտերին, քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին համապատասխան իրականացնելու համար: Երևանի քաղաքապետարանի ղեկավարությունը պատասխանատու է նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որը իր կարծիքով, թույլ է տալիս պատրաստել սխալների արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ:

Հաշվեքննողի պատասխանատվությունը

Հաշվեքննողների պատասխանատվությունն է անցկացված հաշվեքննության արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Հաշվեքննությունն անցկացվում է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան՝ առաջնորդվելով Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության ստանդարտներով: Հաշվեքննության ընթացքում անհրաժեշտ է հետևել վարքագծի սկզբունքների պահանջներին, և հաշվեքննությունը պլանավորել ու իրականացնել այնպես, որպեսզի ձեռք բերվի ողջամիտ երաշխիք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից և անհամապատասխանություններից զերծ լինելու վերաբերյալ:

Հաշվեքննության ընթացքում կատարվում է ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվության վերաբերյալ հաշվեքննության ապացույցի ձեռքբերում: Հաշվեքննության ընթացակարգերի ընտրությունը կախված է հաշվեքննողի դատողությունից, ներառյալ՝ խարդախության կամ սխալի կամ անհամապատասխանության հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման և ֆինանսատնտեսական գործունեության մեջ էական անհապատասխանությունների ռիսկերի գնահատումը:

Եզրահանգում

Հաշվեքննության ընթացքում ձեռք են բերվել և արձանագրվել են բավարար ապացույցներ «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի

1-ին կետի բ. ենթակետի դրույթին համապատասխան ՀՀ հաշվեքննիչ պալատի կարծիքը հիմնավորելու համար:

ՀՀ հաշվեքննիչ պալատի կարծիքով Երևանի քաղաքապետարանի 2020 թվականի վերելակների հիմնանորոգման վերաբերյալ ստացվել է բավարար տեղեկատվություն հաշվեքննություն իրականացնելու համար, հաշվետվությունները արժանահավատ են, էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել, բացառությամբ՝ «Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ» բաժնում արձանագրված անհամապատասխանությունների, և հաշվեքննության ֆինանսական ու համապատասխանության տեսակների առումով տրվում է դրական եզրահանգում:

ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ՝
Աբրամ Բախչագուլյան
30 Հոկտեմբեր 2022 թվական

ՀՀ հաշվեքննիչ պալատ,
Բաղրամյան փող. 19, ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

- Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշման համաձայն յուրաքանչյուր գնման գործընթացի համար պատասխանատու են պատվիրատուի ղեկավարը, ինչպես նաև իրենց վերապահված իրավասությունների մասով՝

1) գնումները համակարգողը,

2) պատասխանատու ստորաբաժանումը,

3) գնահատող հանձնաժողովը:

Պատվիրատուի ղեկավարը տեղական ինքնակառավարման մարմիններում՝ համայնքի ղեկավարն է կամ վերջինիս կողմից լիազորված պաշտոնատար անձն է: Պատվիրատուի ղեկավարը սահմանում է գնումները համակարգող, պատասխանատու ստորաբաժանում և գնահատող հանձնաժողով՝ բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի:

Երևանի քաղաքապետի 14.11.2018թ. թիվ 3407-Ա որոշմամբ պայմանագրերի կնքման և գնման ընթացակարգի արձանագրության հաստատման մասով պատվիրատուի ղեկավար է սահմանվել քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետը, իսկ գնումները համակարգող՝ աշխատակազմի գնումների վարչությունը: Նույն որոշումով պատասխանատու ստորաբաժանում են սահմանվել աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումները՝ ըստ գնման առարկայի ոլորտային պատկանելիության: «Վերելակների հիմնանորոգում» ծրագրի ոլորտային պատկանելիության կամ աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչությանը պատասխանատու ստորաբաժանում սահմանելու վերաբերյալ որևէ վարչական ակտ չի ներկայացվել: Փաստացի, պատասխանատու ստորաբաժանում է

հանդիսացել քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչությունը: Երևանի քաղաքապետի 01.04.2020թ. թիվ 409-Ա կարգադրությամբ ձևավորվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/15» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով:

Երևանի քաղաքապետարանի առարկությունը և բացատրությունը

Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ «Պատասխանատու ստորաբաժանում սահմանել՝ Երևանի քաղաքապետարանի (առանց վարչական շրջանների) կարիքների համար կատարվող գնումների մասով՝ քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների՝ ըստ գնման առարկաների ոլորտային պատկանելության»:

«Վերելակների հիմնանորոգում» ծրագրի ոլորտային պատկանելության կամ աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչությունը պատասխանատու ստորաբաժանում սահմանելու վերաբերյալ որևէ վարչական ակտ չի ներկայացվել», ապա՝ գրությամբ նշված չէ թե, որ օրենսդրական պահանջի համաձայն է սահմանվում նման վարչական ակտ ընդունելու անհրաժեշտություն և իրավասություն:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 7-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ Պատվիրատուի ղեկավարը սահմանում է պատասխանատու ստորաբաժանում:

Կարգի 11-րդ կետի համաձայն՝ «Պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հաստատում է գնման հայտը, հետևում է պայմանագրի կողմի (կապալառու, մատակարար և այլն)՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման գործընթացին և դրա արդյունքներով պատվիրատուի ղեկավարին ներկայացնում է առաջարկություններ՝ պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ կիրառելու ուղղությամբ, ընդունում է պայմանագրի կատարման արդյունքը, ներկայացնում է այն անձի (անձանց) թեկնածությունը, որն առաջադրվում է գնահատող հանձնաժողովի կազմում ընդգրկվելու նպատակով...:

Կարգի 12-րդ կետի համաձայն՝ «Պատասխանատու ստորաբաժանում կարող են սահմանվել պատվիրատուի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը,

ենթակա մարմինը կամ համակարգման ոլորտում գործող կազմակերպությունը, ձևավորած մասնագիտական խումբը, որի կազմում կարող են նաև ընդգրկվել այլ մարմինների կամ կազմակերպությունների ներկայացուցիչներ, պաշտոնապար անձը, եթե տվյալ պատվիրատուն չունի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներ»:

Հաշվեքննողի առձագանք

Երևանի քաղաքապետարանի կողմից նշված Կարգի 12-րդ կետը նախատեսում է պատասխանատու ստորաբաժանում սահմանելու հնարավոր տարբերակները, իսկ նույն Կարգի 20-րդ կետը սահմանում է, որ գնման պահանջի ծագման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր սահմանվում են պատասխանատու ստորաբաժանում և գնումները համակարգող:

- Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ սահմանված կարգի՝ պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝

ա. գնման առարկայի բնութագրերը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում պարտադիր է որակի սերտիֆիկատի առկայությունը, եթե դա կիրառելի է տվյալ ապրանքի համար,

բ. գնման առարկայի պահանջվող ծավալը և մեկ միավորի ձեռքբերման համար նախատեսված առավելագույն գինը:

Պատասխանատու ստորաբաժանման կողմից գնման հայտում վերելակների տեխնիկական բնութագրերը սահամնվել են.

Դռների բացվածքը	800մմ
Դռների բարձրություն	2000 մմ
Գլխավոր էլեկտրոշարժիչը	VVVF համակարգ
Արագությունը	1մ/վ
Հարկերի դռները	մետաղյա, փոշեներկված
Կանչի ապարատ	մետաղական, կոճակները հակավանդալ, լույսով
Հարկային ցուցիչ /բոլոր հարկերում/	լուսային

Վերին հարկի բարձրություն	3600մմ և այլ ցուցանիշներ
Բարձրացման բարձրություն	24000մմ, 39000 մմ
Հորանի չափ	1550 – 1700 մմ և այլ տարբեր ցուցանիշներ

Տեխնիկական բնութագրում նշված է, որ կազմակերպությունը պետք է առաջնորդվի ՀՀ կառավարության 09.02.2006թ. թիվ 692-Ն որոշմամբ՝ հաստատված «Վերելակների և դրանց շահագործման անվտանգության պահանջների» տեխնիկական կանոնակարգով: Կազմակերպությունը պետք է ունենա՝ էներգետիկ ոլորտի լիցենզիա և վերելակների անվտանգ սպասարկումն իրականացնող որակավորված աշխատակիցներ:

Տեխնիկական բնութագրում նշված է նաև, որ տեղադրման աշխատանքներն իրականացնելուց առաջ ընտրված մասնակիցը կարող է ըստ հասցեների կատարել հետևյալ պարամետրերի չափագրում.

- հորանի չափ,
- կանգառների թիվը,
- վերին հարկի բարձրությունը,
- բարձրացման բարձրությունը:

Տեխնիկական բնութագրով սահմանվել է, որ կազմակերպությունը փոխարինման ավարտից հետո պետք է ներկայացնի վերելակների տեխնիկական անվտանգության փորձաքննության եզրակացություն և վերելակի անձնագիր: Կատարված աշխատանքը կարող է ընդունվել միայն պետական լիազոր մարմնի կողմից տրված դրական եզրակացության առկայության դեպքում: Բացի այդ սահմանվել է.

- Երաշխիք՝ 24 ամիս տեղադրումից հետո,
- Սպասարկում՝ 12 ամիս տեղադրումից հետո:

Գնման առարկայի տեխնիկական բնութագրերը սահմանելիս անհրաժեշտ էր ղեկավարվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներով, որը պատասխանատու ստորաբաժանման կողմից կատարվել է թերի: Մասնավորապես.

– Բնութագիրը ունի տարակերպ մեկնաբանություններ պարունակող նկարագրեր, չափման միավորը չի համապատասխանում ՀՀ կառավարության 13.04.2017թ. թիվ 390-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված եզրույթներին՝ «լրակազմի» փոխարեն սահմանվել է «հատ»: Միաժամանակ, մեկ միասնական գնով միավորվել են տարաբնույթ աշխատանքներ, այդ թվում՝ շինարարական, մոնտաժման, փորձարկման, կարգաբերման, հետպայմանագրային շահագործման և սպասարկման:

– Գնման առարկայի մեկ միավորի ձեռքբերման համար նախատեսված գինը չունի հաշվարկային հիմնավորում և չի արտահայտում անհրաժեշտ բոլոր ծախսերի հանրագումարը: Մասնավորապես, աշխատանքի վարձատրության՝ հիմնված աշխատատարության նորմատիվների, նյութերի, այդ թվում՝ փոխարինման ենթակա սարքերի, սարքավորումների, հանգույցների, դետալների, դրանց տեղափոխման, մաքսազերծման, ապահովագրման, պահեստ և օբյեկտ տեղափոխման, նախապատրաստական աշխատանքների, հին վերելակների ապամոնտաժման ծախսերը, վերադիր ծախսերը և շահույթը: Բացի այդ, չի կատարվել գնահաշվարկ ըստ վերելակի տեսակի, բազմաբնակարան շենքի տիպի և հարկայնության:

Երևանի քաղաքապետարանի առարկությունը և բացատրությունը

Գնման առարկայի մեկ միավորի ձեռքբերման համար նախատեսված գինը հաշվարկային հիմնավորում չունենալու վերաբերյալ, տեղեկացնում եմ, որ հաշվարկման համար հիմք է հանդիսացել 2019թ. իրականացված պիլոտային ծրագրի շրջանակներում թվով 20 վերելակների ձեռքբերման գները, ընդորում հաշվի է առնվել և՛ հարկայնությունը և՛ բեռնատարողությունը:

Հաշվեքննողի առձագանք

Հաշվի առնելով բազմաբնակարան շենքերում փոխարինման ենթակա վերելակների բազմազանությունը ըստ հարկայնության, բեռնատարողության, հորանների չափերի և այլ նկարագրերի, տվյալ ընթացակարգում գնման առարկայի միավորի «միջին գնով» գնահաշվարկը կիրառելի չէ: Բացի այդ, չի կատարվել վերելակների տեղադրման աշխատանքների առանձնացված գնահաշվարկ:

- 2020 թվականի ապրիլի 2-ին գնումների կայքում տեղադրված բաց մրցույթի հրավերով 500 վերելակների ձեռքբերումը նախատեսվել է իրականացնել 6 չափաբաժիններով: Փոխարինման ենթակա վերելակները չեն տեսակավորվել ըստ տարբեր տեխնիկական բնութագրերի՝ վերելակի տեսակի, կանգառների թվի, հարկայնության և բեռնատարողության ու խմբավորվել են չափաբաժիններում ըստ վարչական շրջանների: Հասցեների ընտրությունը կատարվել է վարչական շրջանների կողմից ներկայացված փոխարինման առաջնահերթությունների հիման վրա: Վերելակների փոխարինման առաջնահերությունների ընտրանքը վարչական շրջանների կողմից կատարվել է հաշվի չառնելով ելակետային տվյալների բազմությունը, վերելակների տեխնիկական վիճակը ըստ տարեկան փորձաքննության եզրակացությունների, շահագործման ժամկետը, ինչպես նաև վերանորոգմամբ շահագործման ժամկետը երկարացնելու անհնարինությունը:

Երևանի քաղաքապետարանի առարկությունը և բացատրությունը

Վերելակների փոխարինման ընտրանքին, տեղեկացնում եմ, որ Երևան քաղաքի 500 վերելակների փոխարինման ծրագրով իրականացվել է շահագործման ժամկետն ավարտած վերելակների փոխարինում նոր վերելակներով:

Հաշվեքննողի առձագանք

Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերում առկա շուրջ 4000 վերելակների շահագործման ժամկետը ավարտած է, սակայն չեն սահմանվել չափորոշիչներ վերելակների փոխարինման առաջնահերթությունը հիմնավորելու համար:

- «Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ

չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը»:

Երևանի քաղաքապետարանը տարբեր բնութագրերով վերելակները մեկ չափաբաժնում խմբավորելու հիմնավորում է ներկայացրել՝ «դրանց ընդհանուր ֆունկցիոնալ համանմանությունը»: Ընդ որում, Երևանի քաղաքապետարանի կողմից 2019 թվականի հունիսի 18-ին հայտարարվել էր մրցույթ 12 չափաբաժիններով 20 վերելակ՝ տեղադրումով ձեռք բերելու համար: Մրցույթի հրավերով վերելակները առանձին 12 չափաբաժինների մեջ խմբավորվել էին ըստ կանգառների թվի, վերելակների բեռնատարողության, հորանի չափերի և այլն: Արդյունքում 12 չափաբաժինների հաղթողներ են ճանաչվել 3 տարբեր ընկերություններ:

Երևանի քաղաքապետարանի առարկությունը և բացատրությունը

Առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում միավորելու դիտարկմանը, ապա «Գնումների մասին» օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը», իսկ նման հիմնավորումը ներկայացվել է պատասխանատու ստորաբաժանման կողմից գնման հայտով:

Հաշվեքննողի առձագանք

Ներկայացված «դրանց ընդհանուր ֆունկցիոնալ համանմանությունը» բավարար հիմնավորում չի հանդիսանում առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում խմբավորելու անհրաժեշտությունը հիմնավորելու համար:

- Մինչև հրավերի հայտարարության վերջնաժամկետի ավարտը Երևանի քաղաքապետարանին հնարավոր մասնակիցների կողմից ներկայացվել են բազմաթիվ հարցումներ հրապարակված հայտարարության հրավերի տեքստի վերաբերյալ: Դրանց վերաբերյալ պարզաբանումները ներկայացվել են գնահատող հանձնաժողովի նիստերի յոթ արձանագրություններում, որոնք տեղադրված են gnumner.am կայքում:

Համաձայն 2020 թվականի ապրիլի 4-ի թիվ 3 արձանագրության՝ հնարավոր մասնակցի կողմից հարց է բարձրացվել, որ հրավերում նշված չէ հորանի խորությունը և որոշ տեղերում սխալ է նշված վերին հարկի բարձրությունը: Դրան ի պատասխան գնահատող հանձնաժողովը նշել է, որ հրավերում ներկայացված պայմանագրի նախագծի թիվ 1 հավելվածի համաձայն՝ տեղադրման աշխատանքներն իրականացնելուց առաջ ընտրված մասնակիցը կարող է ըստ հասցեների կատարել հետևյալ պարամետրերի չափագրում՝ հորանի չափի, կանգառների թվի, վերին հարկի բարձրության, բարձրացման բարձրության:

Ըստ 2020 թվականի ապրիլի 29-ի թիվ 5 արձանագրության՝ հնարավոր մասնակցի հարցին՝ հրավերի մեջ նշված վերջնաժամկետը՝ պայմանագիրը (համաձայնագիրը) ուժի մեջ մտնելու օրվանից 2020 թվականի հոկտեմբերի 31-ը ներառյալ վերաբերում է վերելակների մոնտաժման վայր հասցնելու ժամկետին, թե նաև վերելակների ապամոնտաժման, մոնտաժման, կարգաբերման և թողարկման աշխատանքներին, գնահատող հանձնաժողովի կողմից տրվել է պատասխան, որ պայմանագրային պարտավորությունների ամբողջական կատարման վերջնաժամկետն է 31.10.2020թ.:

Ըստ 2020 թվականի մայիսի 7-ի թիվ 7 արձանագրության՝ հնարավոր մասնակիցը ներկայացրել է հետևյալ հարցադրումները՝

- Արդյոք հրավերում նշված տեխնիկական տվյալները չպետք է կազմվեն հիմք ընդունելով նախագծային արդյունքները, այլ ոչ թե հակառակը,
- Նախագծի բացակայության պարագայում որտեղից են վերցվել վերելակների տեխնիկական տվյալները և ինչ հիմքերով, քանի որ 1300մմ կամ 1400մմ հորանների դեպքում 800մմ դռների բացվածքը չի կարող համարվել ստանդարտ:

Ներկայացված հարցերին գնահատող հանձնաժողովը պատասխանել է, որ տեխնիկական բնութագրի չափորոշիչները տրամադրել են վարչական շրջանները, որպես կողմնորոշիչ տվյալներ: Նշվել է նաև, որ շենքերի կառուցվածքի տարբերությունները և դրանցով պայմանավորված նաև վերելակների ու հորանների

տեխնիկական բնութագրերի և չափերի բազմազանությունը, ինչպես նաև հնարավոր տարակերպ ընկալումից խուսափելու նպատակով անհրաժեշտ է որպեսզի մասնակիցը մինչև հայտ ներկայացնելը կամ դրանից հետո իր կողմից տեղում իրականացնի տեխնիկական պարամետրերի ցանկացած չափագրում իր մասնագետների կողմից: Հարկ է նշել, որ մասնակիցը գնումների մասին օրենսդրությամբ մինչև հայտ ներկայացնելը չափագրում կատարելու որևէ պարտավորություն չունի:

Բացի այդ, հնարավոր մասնակցի կողմից ներկայացվել է ևս մեկ հարցադրում՝ «հաշվի առնելով այն փաստը, որ վերելակները պատվիրվելու են ըստ հրավերի պահանջների, որից հետո միայն կատարվելու է տեղադրման աշխատաքներ, և եթե փաստացի հորանների և հրավերի տվյալներում առկա լինեն չափերի անհամապատասխանություններ, որոնք անհնարին կդարձնեն արդեն իսկ պատվիրված վերելակների տեղադրումը, այդ դեպքում ով է կրելու պատասխանատվություն չտեղադրվող կամ հրավերի պահանջներին անհամապատասխան վերելակների տեղադրման արդյունքում»: Հարցին գնահատող հանձնաժողովը չի պատասխանել:

Երևանի քաղաքապետարանի առարկությունը և բացատրությունը

Հնարավոր մասնակցի հարցին գնահատող հանձնաժողովի կողմից չպատասխանելու վերաբերյալ տեղեկացնում եմ, որ համաձայն 07.05.2020թ. «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/15» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի արտահերթ նիստի N 7 արձանագրության՝ հարցին պատասխանվել է.

Հարց. «2. Հավելված 1-ի տեխնիկական բնութագրում նշված է, որ Տեղադրման աշխատանքներն իրականացնելուց առաջ ընտրված մասնակիցը կարող է ըստ հասցեների կատարել հետևյալ պարամետրերի չափագրում:

- հորանի չափ

-Կանգառների թիվը

-Վերին հարկի բարձրությունը

-Բարձրացման բարձրությունը

Հարց՝

Հաշվի առնելով այն փաստը, որ վերելակները պատվիրվելու են ըստ հրավերի պահանջների և հետո նոր միայն կատարվելու է տեղադրման աշխատանքներ, և եթե փաստացի հորանների և հրավերի տվյալներում առկա լինեն չափերի անհամապատասխանություններ որոնք անհնարին կդարձնեն արդեն իսկ պատվիրված վերելակների տեղադրումը ով է կրելու պատասխանատվություն չտեղադրվող կամ հրավերի պահանջներին անհամապատասխան վերելակների տեղադրման արդյունքում:»

Պատասխան. «Ինչ վերաբերում է 1.2 և 2-րդ հարցերին, ապա տեղեկացնում ենք, որ Հրավերի տեխնիկական բնութագրի թիվ 1 հավելվածով ներկայացված չափորոշիչները տրամադրվել են Երևան քաղաքի վարչական շրջանների կողմից, որպես բնութագրիչ տվյալներ և հաշվի առնելով որ շենքերի կառուցվածքի տարբերությունները և դրանցով պայմանավորված նաև վերելակների և հորանների տեխնիկական բնութագրերի և չափերի բազմազանությունը, ինչպես նաև հնարավոր տարակերպ ընկալումից խուսափելու նպատակով, գտնում ենք, որ անհրաժեշտ է որպեսզի մասնակիցը մինչև հայտ ներկայացնելը, կամ դրանից հետո, նաև իր կողմից տեղում իրականացնի տեխնիկական պարամետրերի ցանկացած չափագրում իր մասնագետների կողմից:»

Հաշվեքննողի առձագանք

Հնարավոր մասնակցի հարցին գնահատող հանձնաժողովը ըստ էության չի պատասխանել:

- Հնարավոր մասնակիցը հարցրել է, թե ինչ հիմքերով և գնահատականների հիման վրա է ընտրվել պայմանագրի (համաձայնագրի) ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020 թվականի հոկտեմբերի 31-ը ներառյալ վերջնաժամկետը, քանի որ ՀՀ տարածքում երբևէ նման ծավալի վերելակների փոխարինման աշխատանքներ չեն կատարվել և հաշվի առնելով միջազգային փորձը նման քանակի վերելակների համար տրամադրվում է ավելի երկար ժամանակահատված, քանի որ միջին հաշվարկներով միայն վերելակների արտադրությունը և մատակարարումը ՀՀ տարածք կտևի 80 օր: Գնահատող հանձնաժողովի կողմից տրվել է պատասխան, որ

պայմանագիրը կարող է երկարացվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի համապատասխան:

Հնարավոր մասնակիցը նշել է նաև, որ հաշվի առնելով տեղական նորմերը՝ վերելակների վերջին հարկի բարձրությունը չի կարող լինել 1000մմ կամ 1500մմ կամ դրանց մոտ չափեր, և խնդրել է 6-րդ չափաբաժնի Արաբկիր վարչական շրջանի հորանների վերջին հարկերի բարձրությունների վերաբերյալ տրամադրել ճիշտ տեղեկատվություն: Գնահատող հանձնաժողովի կողմից տրվել է նույն պատասխանը, որ տարակերպ ընկալումից խուսափելու նպատակով անհրաժեշտ է որպեսզի մասնակիցը մինչև հայտ ներկայացնելը կամ դրանից հետո իր կողմից տեղում իրականացնի տեխնիկական պարամետրերի ցանկացած չափագրում իր մասնագետների կողմից:

2020 թվականի մայիսի 5-ի թիվ 8 արձանագրությունում գնահատող հանձնաժողովը անդրադարձ է կատարել պայմանագրի վերջնաժամկետի խնդրին, նշելով, որ վերջնաժամկետն իրատեսական է, հաշվի առնելով պատվիրատուի կողմից կազմակերպված վերելակների ձեռքբերման նախորդ փորձը: Բացի այդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքին տարբեր հղումներ տալով գնահատող հանձնաժողովը կատարում է հետևյալ եզրահանգումը՝ «քաղաքացիներն ու իրավաբանական անձինք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանգրի՝ օրենսդրության չհակասող ցանկացած պայման և մասնակիցը գնման ընթացակարգին մասնակցելու համար ինքն է գնահատում իր ռիսկերը և հնարավորությունները»: Սակայն, մասնակիցը չի կարող որոշել պայմանագրի որևէ պայման, այլ տեսնելով հրավերով ներկայացված պայմանագրի նախագծի ռիսկերը, կարող է ընդամենը չմասնակցել մրցույթին:

Գնահատող հանձնաժողովը թիվ 8 արձանագրությունում անդրադարձ է կատարել նաև դռների բացվածքի խնդրին, և նշել է, որ նախքան գնման հայտ կազմելը պատվիրատուի և մասնագետների կողմից խորհրդակցության արդյունքում պարզվել է, որ ներկաայացված շենքերում հնարավոր է պահպանել 800մմ դռների

բացվածք՝ հաշվի առնելով, որ պատվիրատուի կողմից չի սահմանվել դռների բացման ձևի որևէ պահանջ: Սակայն, մատակարար կազմակերպությունը հետագայում դռների տեղադրման աշխատանքների ընթացքում բազմիցս բախվել է վերջիններիս տեղադրման իրականացման անհնարինությանը: Արդյունքում, պայմանագրի շրջանակում կնքված համաձայնագրով կատարվել է դռների բացվածքի փոփոխություն՝ 800մմ-ից մինչև 700մմ, որով սահմանափակվել է շարժասայլակներով մուտքը վերելակ:

Երևանի քաղաքապետարանի առարկությունը և բացատրությունը

30.09.2020թ. կնքված N1 համաձայնագրով կատարված վերելակների դռների բացվածքի փոփոխությամբ՝ 800մմ-ից մինչև 700մմ, սահմանափակվել է շարժասայլակներով մուտքը վերելակ դիտարկման կապակցությամբ տեղեկացնում եմ, որ չի սահմանափակվել շարժասայլակներով մուտքը վերելակ:

Հաշվեքննողի առձագանք

Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրով վերելակների դռների բացվածքը սահմանվել է 800մմ՝ վերելակներ մուտքը շարժասայլակներով ապահովելու համար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը, ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը: Բացի այդ, նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը չպետք

է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը: Տեխնիկական բնութագրերը չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

Փաստորեն, գնման առարկայի տեխնիկական բնութագրի սխալներով և թերի կազմումը հանգեցնում է գնումների գործընթացում մրցակցության և հնարավոր մասնակիցների ներգրավման համար խոչընդոտների առաջացմանը:

- 2020 թվականի հունիսի 16-ին Երևանի քաղաքապետարանը վերելակների ձեռքբերման նպատակով «ՌԱՖԵԼԳՐԻԳ» ՓԲԸ հետ կնքել է N «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/15» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր: Պայմանագրի գինը կազմել է 4,678,830.0 հազ. դրամ՝ ներառյալ ԱԱՀ, որն իր մեջ ներառում է հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Պայմանագրով 500 վերելակների տեղադրման վերջնաժամկետ է սահմանվել մինչև 2020 թվականի հոկտեմբերի 31-ը՝ պայմանագրի հավելվածում նշված համապատասխան հասցեներում: Պայմանագիրը կնքվել է 6 չափաբաժինների համար, աղյուսակ 1-ում նշված բաշխվածությամբ:

Երևանի քաղաքապետարանի և «ՌԱՖԵԼԳՐԻԳ» ՓԲԸ միջև վերելակների ձեռքբերման նպատակով կնքված թիվ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/15» պայմանագրի չափաբաժինները

Աղյուսակ 1

Չափաբաժին	ОАО ''Могилев-лифтмаш'' LP-0401K 400 կգ (հատ)	Livalift 400 կգ (հատ)	Livalift B1749 630 կգ (հատ)	Ընդամենը (հատ)	Միավորի գին (հազ. դրամ)	Գումար (հազ. դրամ)
Չափաբաժին 1						
ԱՎԱՆ	38		1	39		
ՆՈՐ ՆՈՐՔ	58		11	69		
Ընդամենը	96		12	108	9,240.7	998,000.2
Չափաբաժին 2						
ԿԵՆՏՐՈՆ	51	16		67	9,377.9	628,320.0

Չափաբաժին 3						
ԷՐԵԲՈՒՆԻ	26			26		
ՇԵՆԳԱՎԻԹ	32			32		
Ընդամենը	58			58	9,103.6	528,010.0
Չափաբաժին 4						
ՄԱԼԱԹԻԱ ՍԵԲԱՍՏԻԱ	93	19		112	9,080.9	1,017,060.0
Չափաբաժին 5						
ՔԱՆԱՔԵՌ ԶԵՅԹՈՒՆ	18	4	3	25		
ԱՐԱԲԿԻՐ	26	22		48		
Ընդամենը	44	26	3	73	9,041.1	660,000.0
Չափաբաժին 6						
ԱՋԱՓՆՅԱԿ	11	3	22	36		
ԴԱՎԹԱՇԵՆ	16	8	22	46		
Ընդամենը	27	11	44	82	10,334.6	847,440.0
Ընդհանուրը 6 չափաբաժինների համար	369	72	59	500		4,678,830.0

Փաստորեն, պայմանագրով գնման առարկայի միավորի գինը չափաբաժիններում սահմանվել է միջին գնով՝ չափաբաժնի ընդհանուր գումարը հարաբերած վերելակների թվին, հաշվի չառնելով, որ առկա են տարբեր բնութագրեր և գներ ունեցող վերելակներ:

- 2020 թվականի սեպտեմբերի 30-ին Երևանի քաղաքապետարանի և «ՌԱՖԵԼԳՐԻԳ» ՓԲԸ միջև կնքվել է թիվ 1 համաձայնագիրը, որով պայմանագրում առանց պայմանագրի գնի փոփոխության կատարվել են փոփոխություններ: Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 1-ից 6-րդ չափաբաժիններում կատարվել են փոփոխություններ, որով փոխարինվել է 123 հասցեների վերելակների հորանի չափերը (1450x1700-ից մինչև 1580x1392 մմ), դռների բացվածքը (800-ից մինչև 700 մմ), վերին հարկի բարձրությունները (4200-ից մինչև 4620 մմ): Պայմանագրի 1-ից 6-րդ չափաբաժինների մասով կազմված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի մեջ ավելացվել է նոր կետ՝ «Փաստացի տեղադրված և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության

«Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից տեխնիկական անվտանգության փորձաքննության արդյունքում դրական եզրակացություն ստացած վերելակներից յուրաքանչյուրի պայմանագրային արժեքի մինչև 35 տոկոսի չափով կատարել վճարում՝ անկախ բազմաբնակարան շենքերի հարկայնությունից:»: Փոփոխությունների վերաբերյալ ներկայացվել է ОАО «Могилевлифтмаш» 16.09.2020թ. թիվ 52/334 նամակը Երևանի քաղաքապետին, որտեղ նշվել է, որ 500 տեխնիկական փաստաթղթերում առկա են որոշ հասցեներ, որտեղ անհնար է 800մմ դռների բացվածքով վերելակների տեղադրում: Իսկ 400կգ բեռնատարողությամբ և 800մմ դռների բացվածքով վերելակների համար գոյություն ունեն հետևյալ նվազագույն չափերը՝ 1460 x1630մմ ետին հակակշռի համար և 1500x1550մմ կողային հակակշռի համար:

2020 թվականի հոկտեմբերի 22-ին Երևանի քաղաքապետարանի և «ՌԱՖԵԼԳՐԻԳ» ՓԲԸ միջև կնքվել է թիվ 2 համաձայնագիրը, որով կատարվել են փոփոխություններ՝ պայմանագրով նախատեսված թվով 131 թուրքական արտադրության «LIVALIFT» ֆիրմայի վերելակները փոխարինվել են բելառուսական ОАО «Могилевлифтмаш» համապատասխան վերելակներով, որից 59 հատը՝ 630կգ բեռնատարողության: Համաձայնագրում նշվել է, որ պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ: Փոփոխությունների վերաբերյալ ներկայացվել են «ՌԱՖԵԼԳՐԻԳ» ՓԲԸ 06.10.2020թ., 15.10.2020թ. և 16.10.2020թ. գրությունները: Գրություններում նշվել է, որ հորանի չափերի, հարկայնության, դռների բացվածքի, վերին հարկի բարձրության ոչ ճշգրիտ չափագրումների պատճառով արդեն իսկ որոշ քանակությամբ ներմուծված թուրքական վերելակների տեղադրման մասով առաջացել են բարդություններ և հնարավոր չէ շարունակել աշխատանքները բարձրահարկ շենքերում և ավարտին հասցնել մնացած վերելակների տեղադրումը:

Երևանի քաղաքապետարանի առարկությունը և բացատրությունը

«ՌԱՖԷԼԳՐԻԳ» ՓԲԸ կողմից թուրքական վերելակներ ներմուծված լինելու վերաբերյալ, որոնք չեն տեղադրվել ոչ ճշգրիտ չափագրումների պատճառով, տեղեկացնում եմ, որ նշվածի մասին Երևանի քաղաքապետարանը չի տիրապետում հավաստի տեղեկատվության: «ՌԱՖԷԼԳՐԻԳ» ՓԲԸ-ի կողմից ըստ տեխնիկական բնութագրի պահանջի կատարվել են համապատասխան չափագրումներ:

Հարկ եմ համարում նշել, որ թուրքական («ԼԻՎԱԼԻՖՏ») արտադրության վերելակները՝ «Մոգիլյովլիֆտմաշ» ԲԲԸ գործարանի արտադրած համարժեք վերելակներով փոխարինելն իրականացվել է 44-օրյա պատերազմի ընթացքում:

Հաշվեքննողի առձագանք

Արձանագրված խնդիրը ևս մեկ անգամ հիմնավորում է այն հանգամանքը, որ տեխնիկական բնութագրերով սահմանված չափորոշիչների անհամապատասխանությունները ազդել են հնարավոր մասնակիցների ներգրավման և հաղթող կազմակերպության տնտեսական գործունեության վրա:

2020 թվականի հոկտեմբերի 30-ին Երևանի քաղաքապետարանի և «ՌԱՖԵԼԳՐԻԳ» ՓԲԸ միջև կնքվել է թիվ 3 համաձայնագիրը, որով պայմանագրով նախատեսված վերջնաժամկետը՝ հոկտեմբերի 31-ի փոխարեն սահմանվել է դեկտեմբերի 20-ը, որը թույլատրվել է ՀՀ կառավարության 24.10.2020թ. թիվ 1567-Ա որոշմամբ:

2020 թվականի դեկտեմբերի 14-ին Երևանի քաղաքապետարանի և «ՌԱՖԵԼԳՐԻԳ» ՓԲԸ միջև կնքվել է թիվ 4 համաձայնագիրը, որով 3-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժիններում կատարվել է վերելակների փոխարինման թվով ութ հասցեների փոփոխություն:

- Համաձայն կնքված պայմանագրի կատարողը՝ «ՌԱՖԵԼԳՐԻԳ» ՓԲԸ պարտավորվել է փոխարինված վերելակների տեղադրումից հետո 12 ամիս իրականացնել տեխնիկական սպասարկում: Մասնավորապես, էլեկտրական թողարկիչների և ռելեների կոնտակտային համակարգերի, խցիկի և հորանի դռների աշխատանքի, վերելակի հորանի լուսավորության ստուգում և կարգավորում՝ ամիսը մեկ պարբերականությամբ, կարապիկի և էլեկտրական սարքավորումների, հորանի

էլեկտրական մալուխների վիճակի ստուգում՝ երեք ամիսը մեկ պարբերականությամբ և այլ աշխատանքներ:

Ընտրանքային կարգով ուսումնասիրվել են Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի «Արգիշտի» համատիրության բազմաբնակարան շենքերում փոխարինված 16 վերելակների անձնագրերը: Պարզվել է, որ բոլոր անձնագրերում տեխնիկական սպասարկման աշխատանքների գրանցման համար նախատեսված էջերում համապատասխան գրառումները բացակայում են: Փաստորեն, չի հիմնավորվում «ՌԱՖԵԼԳՐԻԳ» ՓԲԸ կողմից փոխարինված վերելակների տեղադրումից հետո տեխնիկական սպասարկման կատարումը, որի արժեքը ներառված է պայմանագրի գնում և վճարվել էր նախորոք՝ վերելակների հանձնման ընդունման արձանագրությունների հիման վրա: Սակայն, պայմանագրում տեխնիկական սպասարկման աշխատանքների առանձնացված գնահաշվարկի բացակայության պատճառով հնարավոր չէ որոշել այդ գումարի չափը:

Երևանի քաղաքապետարանի առարկությունը և բացատրությունը

Վերելակների անձնագրերում տեխնիկական բնութագրով նախատեսված սպասարկման աշխատանքների կատարման վերաբերյալ գրառումների բացակայության մասին, տեղեկացնում եմ, որ նշված գրառումները «ՌԱՖԷԼԳՐԻԳ» ՓԲԸ-ի կողմից կատարվել են համապատասխան մատյաններում:

Հաշվեքննողի առձագանք

Համատիրություններում առկա վերելակների անձնագրերի տեխնիկական սպասարկման համար նախատեսված համապատասխան էջերում սպասարկման փաստը հիմնավորող որևէ գրառում կատարված չէ, իսկ տեխնիկական սպասարկման կատարումը հիմնավորող այլ փաստաթղթեր չեն ներկայացվել:

ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ին թիվ 186-Ն որոշմամբ հաստատվել է Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեն, որով

«վերելակների հիմնանորոգում» ծրագրով նախատեսվել է 179,200.6 հազ. դրամ: Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի մարտի 19-ի թիվ 203-Ն որոշմամբ փոփոխություն է կատարվել Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեում, որի արդյունքում «վերելակների հիմնանորոգում» ծրագրով «այլ մեքենաներ և սարքավորումներ» հոդվածով լրացուցիչ նախատեսվել է ևս 5,000,000.0 հազ. դրամ: Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեի կատարման հաշվետվության համաձայն՝ «վերելակների հիմնանորոգում» ծրագրով փաստացի ծախսը 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 2,683,621.6 հազար դրամ կամ 51.8%: 2020 թվականի համար նախատեսված ծրագիրը ավարտվել է 2021 թվականի փետրվարի 1-ին:

«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի և ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի թիվ 667-Լ որոշման հավելվածի 11-րդ կետի համաձայն «Երևան քաղաքի վերելակների փոխարինում» ծրագրի իրականացման լայնածավալ աշխատանքները համակարգված մեխանիզմով իրագործելուն ուղղված հարցերով զբաղվելու նպատակով ՀՀ փոխվարչապետի 26.07.2019թ. թիվ 470-Ա որոշմամբ ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ: 2020 թվականի ապրիլի 1-ին Երևանի քաղաքապետի տեղակալի կողմից ՀՀ փոխվարչապետին ուղղված նամակում նշվել է, որ վերոհիշյալ աշխատանքային խումբն իր գործունեության ընթացքում ունեցել է 7 հանդիպում և առաջարկվել է աշխատանքային խմբի առաքելությունն այդ պահին համարել ավարտված և դադարեցնել աշխատանքային խմբի գործունեությունը: Աշխատանքային խմբի գործունեության արդյունքում որոշվել է Երևանի քաղաքապետարանի կողմից 2019 թվականի տնտեսումների հաշվին 2020 թվականին իրականացնել Երևան քաղաքի 500 վերելակների փոխարինման ծրագիր՝ 6 չափաբաժիններով:

Երևան քաղաքի բյուջեում կատարված փոփոխության հիման վրա գնումների պլանում, ըստ armeps.am կայքի, 2020 թվականի ապրիլի 1-ին 500 վերելակների

ձեռքբերման համար լրացվել են 6 չափաբաժիններ, որոնք ներկայացված են աղյուսակ 2-ում՝

Աղյուսակ 2

Գնումների պլանում վերելակների ձեռքբերման չափաբաժինները

հազ. դրամ

ԳՄԱ կոդ / չափաբաժին	Քանակ (հատ)	Միավորի գին	Գումար
42414700/1	108	9,624.6	1,039,460.9
42414700/2	67	9,717.9	651,096.0
42414700/3	58	9,373.8	543,679.0
42414700/4	112	9,369.9	1,049,427.0
42414700/5	73	9,793.7	714,942.0
42414700/6	82	10,731.3	879,968.0

Հարկ է նշել, որ «վերելակների հիմնանորոգում» ծրագրին 2020 թվականին լրացուցիչ հատկացված 5,000,000.0 հազ. դրամի դիմաց գնումների պլանում լրացումների նախահաշվային գների հանրագումարը կազմել է 4,878,572.9 հազ. դրամ:

Հայտ ներկայացնելու վերջնաժամկետի օրը՝ 2020 թվականի մայիսի 13-ին տեղի է ունեցել գնահատող հանձնաժողովի նիստ, և պարզվել է, որ հայտ են ներկայացրել 5 մասնակիցներ: Երկու մասնակիցների կողմից հայտի ապահովման փաստաթղթեր չներկայացնելու պատճառով նիստը կասեցվել է մեկ աշխատանքային օրով, որը արձանագրվել է թիվ 9 արձանագրությամբ:

Հաջորդ նիստը տեղի է ունեցել 15.05.2020թ. (արձանագրություն թիվ 10), որի ժամանակ պարզվել է, որ մասնակիցներից միայն մեկն է ներկայացրել բացակայող փաստաթուղթը, մյուս մասնակցի հայտը մերժվել է: Միաժամանակ գնահատող հանձնաժողովը, ելնելով աշխատանքային անհրաժեշտությունից, որոշել է կասեցնել նիստը և հաջորդ նիստը հրավիրել 2020 թվականի մայիսի 20-ին:

2020 թվականի մայիսի 20-ին տեղի է ունեցել հերթական նիստը, որի արձանագրություն թիվ 11-ի 1.2 կետում նշվել է, որ հրավերի պահանջի համաձայն

հրավերով սահմանված ժամկետում, ուղեկցող գրություններով տրամադրված հայտերի ապահովման՝ բանկային երաշխիքների բնօրինակները համապատասխանում են հրավերի պայմաններին: Սակայն 1.3 կետում նշվել է, որ 3 մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, որի պատճառով արձանագրության 1.5 կետով որոշվել է նիստը կասեցնել 1 աշխատանքային օրով՝ արձանագրած անհամապատասխանությունները շտկելու նպատակով:

2020 թվականի մայիսի 22-ին տեղի է ունեցել գնահատող հանձնաժողովի նիստը, որի արձանագրություն թիվ 12-ի 1.3 կետի համաձայն 3 մասնակիցների հայտերը՝ «Եվրոպա» ՍՊԸ, «ՌԱՖԷԼԳՐԻԳ» ՓԲԸ, «Նորտեքս Էնջինիրինգ» ՓԲԸ գնահատվել են բավարար: Արձանագրության 1.4 կետի համաձայն, քանի որ «ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի գնային առաջարկը գերազանցում է նախահաշվային արժեքը, գնահատող հանձնաժողովը հայտը գնահատել է անբավարար և մերժել է: Արձանագրության 1.5 կետի համաձայն, գնահատող հանձնաժողովը մասնակիցներից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին՝ «ՌԱՖԷԼԳՐԻԳ» ՓԲԸ բոլոր վեց չափաբաժինների մասով ճանաչել է ընտրված մասնակից:

Պայմանագրի շրջանակում կազմվել են հանձնման ընդունման թվով 55 արձանագրություններ (աղյուսակ 3):

«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/15» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրի հանձնման ընդունման արձանագրություններ

Աղյուսակ 3

Արձանագրություն		Չափա-բաժին	Վերելակի մոդել	Տեղադրված վերելակների քանակ	Վճարման ենթակա գումար (հազ. դրամ)
Համար	Ամսաթիվ				
01	15.09.2020	3	ЛП-0401К	4	36,414.5
02	30.09.2020	4	ЛП-0401К	18	163,456.1
03	30.09.2020	3	ЛП-0401К	26	236,694.1
04	30.09.2020	1	ЛП-0401К	66	609,889.2

05	02.11.2020	5	ЛП-0401К	6	54,246.6
06	02.11.2020	6	ЛП-0401К	11	113,681.0
07	02.11.2020	1	ЛП-0401К	11	101,648.2
08	02.11.2020	4	ЛП-0401К	15	136,213.4
09	02.11.2020	3	ЛП-0401К	1	9,103.6
10	10.11.2020	4	ЛП-0401К	10	90,808.9
11	05.11.2020	6	ЛП-0401К	5	51,673.2
12	05.11.2020	5	ЛП-0401К	6	54,246.6
13	05.11.2020	2	ЛП-0401К	3	28,133.7
14	12.11.2020	2	ЛП-0401К	9	84,401.2
15	12.11.2020	5	ЛП-0401К	4	36,164.4
16	12.11.2020	4	ЛП-0401К	10	90,808.9
17	20.11.2020	4	ЛП-0401К	8	72,647.2
18	20.01.2020	2	ЛП-0401К	2	18,755.8
19	20.11.2020	5	ЛП-0401К	5	45,205.6
20	20.11.2020	6	ЛП-0401К	1	10,334.6
21	01.12.2020	4	ЛП-0401К	11	99,889.8
22	01.12.2020	5	ЛП-0401К	1	9,041.1
23	01.12.2020	6	ЛП-0401К	12	124,015.6
24	01.12.2020	2	ЛП-0401К	2	18,755.8
25	04.12.2020	5	ЛП-0401К	6	54,246.6
26	04.12.2020	4	ЛП-0401К	10	90,808.9
27	04.12.2020	6	ЛП-0401К	3	31,003.9
28	04.12.2020	2	ЛП-0401К	1	9,377.9
29	04.12.2020	1	ЛП-0401К	1	9,240.7
30	14.12.2020	4	ЛП-0401К	8	72,647.1
31	14.12.2020	3	ЛП-0401К	2	18,207.2
32	17.12.2020	4	ЛП-0401К	9	81,728.0
33	17.12.2020	5	ЛП-0401К	6	54,246.6
34	17.12.2020	3	ЛП-0401К	1	9,103.6
35	17.12.2020	2	ЛП-0401К	6	56,267.5
36	17.12.2020	6	ЛП-0401К	1	10,334.6
37	22.12.2020	2	ЛП-0401К	11	103,157.0
38	22.12.2020	4	ЛП-0401К	13	118,051.6
39	22.12.2020	5	ЛП-0401К	19	171,780.8
40	22.12.2020	3	ЛП-0401К	8	72,828.9
41	22.12.2020	6	ЛП-0401К	4	41,338.5
42	28.12.2020	2	ЛП-0401К	20	187,558.2
43	28.12.2020	3	ЛП-0401К	10	91,036.2
44	28.12.2020	5	ЛП-0401К, ЛП-0401БМЭ	6	54,246.6
45	28.12.2020	6	ЛП-0401К	1	10,334.6
46	28.12.2020	1	ЛП-0401К	4	36,962.9

47	30.12.2020	1	ЛП-0401К	14	129,370.4
48	30.12.2020	2	ЛП-0401К	10	93,779.1
49	30.12.2020	3	ЛП-0401К	6	54,621.7
50	30.12.2020	5	ЛП-0401К	10	90,410.9
51	27.01.2021	2	ЛП-0401К	3	28,133.7
52	27.01.2021	5	ЛП-0401К, ЛП-0611К, ЛП-0621К	4	36,164.4
53	27.01.2021	6	ЛП-0611К, ЛП-0621К-1	24	248,031.2
54	01.02.2021	1	ЛП-0611К, ЛП-0621К	12	110,888.9
55	01.02.2021	6	ЛП-0611К, ЛП-0621К	20	206,692.7
Ընդամենը				500	4,678,830.0

Վերլուծությունը ցույց է տալիս, որ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման ընդունման 1-ից մինչև 36-րդ արձանագրությունները կազմվել են մինչև պայմանագրի վերջնաժամկետի ավարտը, 37-ից մինչև 50-րդ արձանագրությունները կազմվել են 2020 թվականի դեկտեմբերի 22-ից մինչև դեկտեմբերի 30-ը, իսկ 51-ից մինչև 55-րդ արձանագրությունները՝ 2021 թվականի հունվարի 27-ից մինչև փետրվարի 1-ը ներառյալ: Պայմանագրի 6.2-րդ կետով սահմանվել է, որ պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա , սակայն չմատակարարված ապրանքի գնի 0.1 տոկոսի չափով:

Երևանի քաղաքապետարանի կողմից հաշվարկվել են տույժեր 27.01.2021թ. թիվ 51, 52, 53 և 01.02.2021թ.թիվ 54, 55 հանձնման ընդունման արձանագրություններով ուշացումով մատակակարված ապրանքների համար: Ընդհանուր առմամբ, Երևանի քաղաքապետարանի կողմից հաշվարկվել և «ՌԱՖԵԼԳՐԻԳ» ՓԲԸ-ից գանձվել է 14,493.2 հազ. դրամ տույժ:

Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի հունիսի 22-ի թիվ 412-Ա որոշմամբ Երևանի քաղաքապետին թույլատրվել է՝ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող փոխարինված վերելակները անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին, իսկ փոխարինման արդյունքում ապամոնտաժված վերելակների մասերը «ՌԱՖԵԼԳՐԻԳ» ՓԲԸ հանձնման ընդունման ակտերով հանձնել է համապատասխան համատիրություններին:

Հաշվեքննվող օբյեկտի ղեկավարությունը ծանոթացել է հաշվեքննության արդյունքներով կազմված արձանագրությանը, ներկայացրել է առարկություններ և բացատրություններ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երևանի քաղաքապետարանին՝

– գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը բացառելու նպատակով՝ տեխնիկական բնութագրերով ամբողջությամբ և հստակ նկարագրել գնման առարկայի հատկանիշները, ինչպես նաև դրա ձեռք բերման և վճարման պայմանները,

– վերելակների փոխարինման առաջնահերթությունների ընտրանքը կատարել հաշվի առնելով վերելակների տեխնիկական վիճակը՝ ըստ տարեկան փորձաքննության եզրակացությունների, վերելակների շահագործման մեջ գտնվելու ժամկետը և վերանորոգմամբ դրանց շահագործման ժամկետը երկարացնելու անհնարինությունը,

– վերելակների տեխնիկական սպասարկման հանար վճարումը կատարել առանձնացված գնահաշվարկի հիման վրա, տեխնիկական սպասարկման ժամկետի ավարտից հետո՝ դրա կատարումը հիմնավորող փաստաթղթերի առկայության դեպքում:

Համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջի՝ ընթացիկ եզրակացությունը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրել ընթացիկ եզրակացությունում ամրագրված անհամապատասխանության վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացության վերաբերյալ այլ գրավոր տեղեկատվություն: